### ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**13.08.2021թ./երկու հազար քսանմեկ թվականի օգոստոսի տասներեքին/ կնքված և գրանցամատյանում թիվ 61 համարով գրանցված բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին**

ՀՀ, Վայոց ձորի մարզ, քաղաք Վայք
Երկու հազար քսաներկու թվականի մարտի քսաներեքին

ՀԱՍՄԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԸ, ծնված՝ 09.10.1982 թվականին, ՀԾՀ՝ 5910820540, անձնագիր՝ AS0545845, տրված՝ 18.03.2019 թվականին, 037-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ Վայոց Ձորի մարզ, Գլաձոր, Գլաձոր 13 փողոց, տուն 3 հասցեում, այսուհետ՝ «ՎԱՐՁԱՏՈՒ» մի կողմից և ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ում անունից լիազորագրով հանդես է գալիս ԱՐՄԱՆ ՍԼԱՎԻԿԻ ՇԱՓԱՂԱԹՅԱՆԸ, ծնված՝ 31.01.1982 թվականին, ՀԾՀ՝ 4101820139, նույնականացման քարտ՝ 009782210, տրված 10.12.2017թ., 032-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ, Խոզնավար, 1 փողոց, տուն 1 հասցեում, այսուհետ՝ «ՎԱՐՁԱԿԱԼ», մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 13.08.2021թ./երկու հազար քսանմեկ թվականի օգոստոսի տասներեքին/ կնքված և գրանցամատյանում թիվ 61 համարով գրանցված բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

#### 1 Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին.

1.1. Հաստատել 2022թ./երկու հազար քսաներկու թվականի/ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի, որը կցվում է սույն համաձայնագրին և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:

1.2. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի համաձայն՝ սույն համաձայնագրով նախատեսված պայմանները կողմերի միջև տարածվել են 2022թ. հունվարի 1-ից /երկու հազար քսաներկու թվականի հունվարի մեկից/ փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

#### 2. Այլ պայմաններ

2.1. Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2. Սույն համաձայնագիրը կնքված և ստորագրված է 4/չորս/ օրինակից, որոնք ունեն իրավաբանական հավասարազոր ուժ, իսկ դրանց միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է ՀՀ «Վայոց ձորի մարզ» նոտարական տարածքի նոտարի մոտ պահվող օրինակին: Մեկական օրինակ տրվում են Կողմերին:

2.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.4. Կողմերը հավաստիացնում են, որ համաձայնագիրը մոլորության, խաբեության, կամ սպառնալիքի ազդեցության տակ չեն կնքում, և այն համապատասխանում է իրենց իրական մտադրություններին, ինչպես նաև կողմերն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում կեղծ փաստաթղթեր ներկայացնելու արդյունքում միմյանց հասցված նյութական և բարոյական վնասի համար:

| | |
|---|---|
| **«ՎԱՐՁԱՏՈՒ»** | **«ՎԱՐՁԱԿԱԼ»** |
| Հասմիկ Վազգենի Սահակյան | ՀՀ պետական եկամուտների կոմիտե |
| «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ | ք. Երևան, Մ. Խորենացու 3, 7 |
| Հ/Հ 16035014163800 | ՀՎՀՀ 02647057 |
| Հասմիկ Սահակյան (ստորագրություն) | Հ/Հ 900011054013 |
| | Կենտրոնական գանձապետարան |
| | Գործառնական վարչություն |
| | Լիազորված անձ՝ |
| | Արման Շափաղաթյան (ստորագրություն) |

Նոտարական ակտի կոդ: 855-20220323-117-5779337
Նոտարական ակտի գաղտնագիր: FTNPSH

ՀՀ, Վայոց ձորի մարզ, քաղաք Վայք
երկու հազար քսաներկու թվականի մարտի քսաներեքին

Սույն համաձայնագիրը վավերացված է իմ` ՀՀ «Վայոց ձորի մարզ» նոտարական տարածքի նոտար` ՄԵՐԻ ԱՐՄԵՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՍ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ:

Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը և նրա ներկայացուցչի լիազորություններն ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա է գրանցման ՀՀ անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեում` 30/երեսուն/ աշխատանքային օրվա ժամկետում:

Գրանցված է գրանցամատյանում թիվ 390 -ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Մերի Արմենի Մարգարյան

Հավելված 1
13.08.2021թ. կնքված և սեղանամատյանում թիվ 61 համարով
գրանցված բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ՀՀ ՊԵԿ բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծառայության անվանումը | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը՝ Տարի |
| 1. | ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Միկոյան փողոց 12 շենք, բն. 16 հասցեի վարձակալություն | 156,000 | 234,000 | 312,000 | 390,000 | 468,000 | 546,000 | 624,000 | 702,000 | 780,000 | 936,000 | **936,000** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**«ՎԱՐՁԱՏՈՒ»**
Հասմիկ Վազգենի Սահակյան
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16035014163800

(ստորագրություն)

**«ՎԱՐՁԱԿԱԼ»**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացու 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն
Լիազորված անձ՝

(ստորագրություն)